ՀՀ Շիրակի մարզպետարանի քարտուղարության կողմից 2021թ. կատարված աշխատանքների մասին

Հաշվետու ժամանակահատվածում քարտուղարության կողմից ապահովվել է մարզպետարանի պաշտոնական փոստի փաստաթղթաշարժը:

ՀՀ Շիրակի մարզպետարանի քարտուղարությունում մուտքագրվել և ելքագրվել է շուրջ 31842 փաստաթուղթ /մտից, ներքին և ելից / որից՝

ՀՀ վարչապետի աշխատակազմից, ԱԺ-ից, նախարարություններից, հանրապետական գործադիր մարմիններից, այլ պետական գերատեսչություններից, համայնքապետարաններից, մարզպետարանի ենթակայությամբ գործող ՊՈԱԿ-ներից և ՓԲԸ-ներից, ՀԿ-ներից, հիմնադրամներից և այլ կազմակերպություններից ստացված 17950 գրություն, նամակ, առաջարկություն;

Մարզպետարանի աշխատակիցներից ստացված մոտ 530 ապարատային դիմում;

Քաղաքացիներից առձեռն և առցանց եղանակով ստացված շուրջ 2578 դիմում և 192 բողոք;

ՀԿ-ներից, ՁԼՄ-ներց և քաղաքացիներից ստացված 80 հարցում:

Հաշվետու ժամանակահատվածում «Հայփոստի» ծառայության, «Հատուկ» կապի, էլեկտրոնային համակարգի և էլեկտրոնային փոստերի միջոցով առաքվել է 10512 ելից գրություն, մարզպետի կողմից ընդունված 451 որոշում և գլխավոր քարտուղարի կողմից արձակված 629 հրաման:

Հաշվետու ժամանակահատվածում քարտուղարության կողմից իրականացվել է մարզպետարանի կարիքների համար գնման գործընթացը, իրականացվել է մարզպետարանի գույքի պահպանումն ու կառավարման ապահովումը, ապահովվել է մարզպետարանի ավտոտրանսպորտային սպասարկումը, իրականացվել է մարզպետարանի աշխատողների աշխատանքային անհրաժեշտ պայմանների ապահովումը, աշխատակիցների էլեկտրաէներգիայի խնայողական սպառման, ռադիոհանգույցի, հեռախոսակապի, կապի համապատասխան բաժանմունքի հետ բնականոն աշխատանքների ապահովումը, իրականացվել է մարզպետի և աշխատակիցների պաշտոնատար անձանց այցելությունների, նրանց մասնակցությամբ անցկացվող արարողակարգային և այլ միջոցառումների նախապատրաստման և կազմակերպման տնտեսական, նյութատեխնիկական և

տրանսպորտային ապահովումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված լիազորություններ:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Գ. ՊԱՊՈՅԱՆ